ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

26 սեպտեմբերի 2017 թվականի **թիվ 129** քաղ. Մոսկվա

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի ձեւի եւ դրա լրացման կարգի մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի ձեւը.

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի ձեւի լրացման կարգը:

2. Սահմանել, որ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականը տրամադրվում է էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչի վրա փաստաթղթի տեսքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի սեպտեմբերի 26-ի
թիվ 129 որոշմամբ

ՁԵՎ

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի

Եվրասիական տնտեսական միության խորհրդանշանը (1)

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (2)

ՎԿԱՅԱԿԱՆ

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ

թիվ _____ (3)

_____(4)
(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության

_____
լիազորված մարմնի անվանումը)

սույնով հաստատում է, որ _____(5)
(իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձեւը,

_____
անվանումը)

ընդգրկված է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում:

Իրավաբանական անձի գտնվելու վայրը՝

_____(6)

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության հարկային մարմիններում (պետական եկամուտների մարմիններում) հաշվառման կանգնելու մասին տեղեկություններ՝

_____(7)

Սույն վկայականն ուժի մեջ է մտնում_____ից (8)

Հատուկ նշումներ՝ _____(9)

_____	_____
(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմնի ղեկավարի պաշտոնը)	(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմնի ղեկավարի ստորագրությունը, անվան սկզբնատառերը եւ ազգանունը)

Կ.Տ. «___» _____ 20___ թվական

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի սեպտեմբերի 26-ի
թիվ 129 որոշմամբ

ԿԱՐԳ

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի ձեւի լրացման

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի (այսուհետ համապատասխանաբար՝ ռեեստր, վկայական) բոլոր դաշտերը պետք է լրացված լինեն (վկայականի բնօրինակում դաշտերի համարակալումը բացակայում է):

2. Վկայականի 1-ին դաշտում նշվում է Եվրասիական տնտեսական միության խորհրդանշանը:

3. Վկայականի 2-րդ դաշտում բերվում է մեկ տողով կատարված գրառում՝

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»:

4. Վկայականի 3-րդ դաշտում նշվում է վկայականի համարը, որը ձեւավորվում է հետեւյալ կերպ՝

XX/XXXX/ՏԻՊ X,

1 2 3

որտեղ՝

տարր 1՝ Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) ծածկագիրը, որի լիազորված մարմինը որոշում է կայացրել աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան («AM»՝ Հայաստանի Հանրապետության համար, «BY»՝ Բելառուսի Հանրապետության համար, «KZ»՝ Ղազախստանի Հանրապետության համար, «KG»՝ Ղրղզստանի Հանրապետության համար, «RU»՝ Ռուսաստանի Դաշնության համար) իրավաբանական անձին ռեեստրում ընդգրկելու մասին.

տարր 2՝ վկայականի՝ անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրվող հերթական համարը՝ սկսած «0001»-ից.

տարր 3՝ «ՏԻՊ» բառից հետո առանց բացատների նշվում է տրամադրվող վկայականի տիպը («1»՝ առաջին տիպի վկայական, «2»՝ երկրորդ տիպի վկայական, «3»՝ երրորդ տիպի վկայական):

Եթե իրավաբանական անձն ընդգրկվում է ռեեստրում առաջին եւ երկրորդ տիպերի վկայականների տրամադրմամբ, մի վկայականի լրացումը վկայականների միանգամից երկու տիպերի նշմամբ չի թույլատրվում, վկայականի յուրաքանչյուր տիպի համար լրացվում է առանձին ձեւ:

5. Վկայականի 4-րդ դաշտում նշվում է՝

Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն.

Բելառուսի Հանրապետության համար՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն.

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեն.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայությունը.

Ռուսաստանի Դաշնության համար՝ Դաշնային մաքսային ծառայությունը:

6. Վկայականի 5-րդ դաշտում նշվում են ռեեստրում ընդգրկվող իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձեւն ու անվանումը՝ այդ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերին համապատասխան:

7. Վկայականի 6-րդ դաշտում նշվում է ռեեստրում ընդգրկվող իրավաբանական անձի իրավաբանական հասցեն:

8. Վկայականի 7-րդ դաշտում նշվում է՝

Հայաստանի Հանրապետության համար՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

Բելառուսի Հանրապետության համար՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ).

Ղազախստանի Հանրապետության համար՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ).

Ղրղզստանի Հանրապետության համար՝ նույնականացման հարկային համարը (ՆՀՀ).

Ռուսաստանի Դաշնության համար՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ):

9. Վկայականի 8-րդ դաշտում նշվում է այն ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ ձեւաչափով, որը որոշվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 432-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

10. Վկայականի 9-րդ դաշտում նշվում են անդամ պետության լիազորված մարմնի՝ իրավաբանական անձին ռեեստրում ընդգրկելու մասին որոշման ամսաթիվն ու համարը կամ գծի «-» նշանը, եթե այդ որոշման կայացումը նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ: